ՄԱՅՐԵՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

2

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐԵՆԻ 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի սովորողների համար

Երևան – 2025

ՀՏԴ
ԳՄԴ

«Մայրենի 2» աշխատանքային գիրք-տետր /Միքայելյան Ա.Վ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.-Եր.: Էդիթ Պրինտ, 2025.- 64 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա.Մնացականյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ.Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս.Վ.

Հեղինակներ՝
Միքայելյան Արմինե Վալերիի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի
Օհանյան Հասմիկ Վրույրի

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա.Ռ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Մայրենի» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

Նախաբան

«Մայրենի 2» աշխատանքային գիրք-տետրը հասցեագրված է 2–րդ դասարանում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին, նրանց ուսուցիչներին, ծնողներին և նպատակաուղղված է ընթերցանության դժվարությունները հետաքրքրաշարժ ու հարմարեցված առաջադրանքների կատարման միջոցով հաղթահարելուն: Ներկայացված առաջադրանքները կարող են հաղթահարել այն սովորողները, որոնք հաջողությամբ հաղթահարել են նախորդ տարվա հարմարեցված նյութերի պահանջները, չնայած, որ սույն գիրք–տետրում ներկայացված առաջադրանքների մի մասի միջոցով շարունակվում են ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները:

«Մայրենի 2» աշխատանքային գիրք-տետրի ստեղծման հիմնական նպատակն է.

- ուսուցումը կազմակերպել այնպես, որ, սովորելով նույն դասարանում, նույն ծրագրով, երեխաները յուրացնեն միևնույն ուսումնական նյութը, իհարկե, տարբեր մակարդակներով և միջոցներով:
- Առաջադրանքի իրականացման բարդության աստիճանը համապատասխանեցնել երեխայի հնարավորություններին, որպեսզի հիասթափություն չառաջանա ուսման նկատմամբ: Մյուս կողմից էլ՝ այն չպետք է լինի միօրինակ և դյուրին, այլ ունենա դժվարության որոշակի աստիճան, սակայն հաղթահարելի լինի, որի ընթացքում երեխան ոչ թե տանջվի, այլ բերկրանք ապրի:

Գիրք–տետրում ընդգրկված առաջադրանքների կատարումը կարող է օգնել սովորողին գտնելու իր տեղը դասարանում, դառնալու ինքնավստահ, զգալու, որ ինքը դասարանի անդամ է, ուսումնառության զուգընկեր: Այն կնպաստի սովորողների միջև առողջ փոխհարաբերությունների ձևավորմանը, մայրենի լեզվի հանդեպ հետաքրքրության առաջացմանը: Նշենք նաև, որ մշակված առաջադրանքների խոսքային նյութը 2–րդ դասարանի մայրենիի գործող այլընտրանքային դասագրքերի բնագրերից ընտրված հատվածներ են, բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ:

Ներկայացված առաջադրանքները հետաքրքրաշատ են, ունեն խաղային բնույթ: Առաջադրանքների իրականացման ընթացքում երեխան գործողություններ է կատարում. տեղադրում է, դասավորում է, փակցնում է, գունավորում է, անվանում է և այլն: Խոսքային հրահանգները ձևակերպված են պարզ ու մատչելի, տառաչափը՝ 14, կիրառված են գլոբալ ընթերցանության տարրեր, առկա են վանկային կորեր, պահպանված է միջառարկայական կապերի ապահովման դիդակտիկական սկզբունքը:

Աշխատանքային գիրք-տետրն ունի նաև հավելված, որի նյութերը կօգտագործվեն այս կամ այն առաջադրանքի կատարման ընթացքում: Նման առաջադրանքները խթանում են երեխայի հետաքրքրությունն ու ստեղծագործական երևակայությունը:

1. Գծիկների վրա տեղադրիր համապատասխան փոքրատառերը (տես հավելված 1):

Ա ա	Թ թ	Ձ ձ	Չ չ	Եվ և
Բ բ	Ժ ժ	Ղ __	Պ __	Օ __
Գ գ	Ի __	Ճ ճ	Ջ ջ	Ֆ ֆ
Դ __	Լ լ	Մ մ	Ռ __	Ց ց
Ե ե	Խ խ	Յ յ	Ս ս	Ու ու
Զ __	Ծ ծ	Ն ն	Վ վ	Փ փ
Է է	Կ __	Շ __	Տ __	Ք ք
Ը __	Հ հ	Ո ո	Ր ր	

2. ա) Կարդա՛ այբուբենը և լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Ա ա	Թ թ	Ձ ձ	Չ չ	Եվ և
Բ բ	Ժ ժ	Ղ __	Պ __	Օ __
Գ գ	Ի __	Ճ ճ	Ջ ջ	Ֆ ֆ
Դ __	Լ լ	Մ մ	Ռ	Ց ց
Ե ե	Խ խ	Յ յ	Ս ս	Ռ ռ
Զ __	Ծ ծ	Ն ն	Վ վ	Փ փ
Է է	Կ __	Շ __	Ստ __	Ֆ ֆ
Ը __	հ հ	Ո ո	Ր ր	

բ) Կարմիրով ընդգծի՛ր ձայնավորները:

3. Անվանիր պատկերված առարկաները: Որոշիր հնչյունների քանակը, հավելված 2-ից ընտրիր և քառակուսու մեջ տեղադրիր համապատասխան թիվը:



4. ա) Անվանիր պատկերված առարկաները: Սլաքներով միացրու բառերը համապատասխան նկարներին:

ծիածան

տերև

արև

անձրև

ամպ

բ) Արտագրիր **և** տառը ունեցող բառերը:

_____

5. Կարդա՛ տրված բառերը: Արտագրիր: Յուրաքանչյուր բառի կողքին գրիր տառերի քանակը:

օր	*օր*	*2*
բարի		
լույս		
երեկո		
ողջույն		

6. Կարդա՛ և արտագրի՛ր: Ընդգծի՛ր միայն ձայնավորները:

բարև բարև

բարի օր _____

բարի լույս _____

բարի երեկո _____

ողջույն _____

բարի գիշեր _____

7. Գունավորի՛ր ծիածանը քո նախընտրած գույներով:



8. Գրի՛ր քո անունը և ազգանունը: Ինչպես տրված է օրինակում:

Զոռ Կարապետյան

_____

9. Գրի՛ր քո ընտանիքի անդամների անունները:

_____

_____

_____



10. Գուշակի՛ր հանելուկը և գրի՛ր պատասխան–բառը, որը սկսվում է ձայնավորով:

Հարազատ են կոչվում նրանք ու մի հարկի տակ ապրում,
Միմյանց մասին հոգ են տանում,
Միմյանց հետ տխրում, ուրախանում:

_____

11. Կարդա՛ բառերը: Դրանք գծերով համապատասխանեցրո՛ւ նկարներին:



Գիշեր
տաք
պայծառ
ցերեկ
մութ
ոսկեգույն
ճառագայթ
աստղ
սառը



12. Կարդա՛ բառերը: Արտագրի՛ր **ու** ձայնավոր ունեցողները:

ծաղիկ, հովիկ, լույս, հույս, դպրոց, երկինք, հնչյուն, տառ, աշխարհ, արև, բարև, բույր, համբույր

լույս,

13. Կարդա՛, որոշի՛ր յուրաքանչյուր բառի տառերի քանակը: Արտագրի՛ր համապատասխան թվի կողքին:

երգ, երեխա, օր, ծիածան, խեցգետին, լույս, համբույր

2 օր

3 _____

4 _____

5 _____

6 _____

7 _____

8 _____

14. Արտագրի՛ր բառերը և որոշի՛ր հնչյունների քանակը:

ծաղիկ, լույս, հույս, բույր, դպրոց, ճուտ, պտուղ, աղջիկ, զինվոր

ծաղիկ (5)

_____

_____

15. Արտագրի՛ր յուրաքանչյուր բառի 3–րդ տառը, ստացի՛ր նոր բառ և կարդա՛:

զինվոր, պտուղ, ագռավ — ՆՈՒՌ

շնորհակալություն, ներեցեք, խնդրեմ — _____

համբույր, ծիածան, գույն, դպրոց, կրիա, երկինք — _____

16. Արտագրիր տրված սխեմաներին համապատասխանող բառերը. դրանցում հնչյունները շատ են տառերից:

Երեխա, երկինք, երգ, տերև, անձրև, բարև, երեկո, ողջույն

□□□□	□□□□	□□□□□	□□□□□	□□□□□

_____

17. Որոշիր՝ ո՞ր հնչյունն է կրկնվում յուրաքանչյուր բառաշարքում: Գրիր այդ հնչյունի տառը:

պտուղ, գույն ____ռ____

լույս, մայր _____

բույս, բարև _____

աղջիկ, մեղու _____

ձի, ընձուղտ _____

արջ, գայլ _____

18. Կարդա՛ և գուշակի՛ր հանելուկը: Պատասխան–բառը միավանկ է:

Կա մի հսկա կենդանի
Եվ խելացի, և՛ բարի,
Յոթը տարին մի անգամ
Ձագ է տալիս աշխարհին:



_____

19. Արտագրիր կենդանիների անվանումները: Ընդգծիր միավանկ բառերը:



ձի աղվես արջ առյուծ շուն գայլ ընձուղտ

ձի, _____

_____

_____

20. Կարդա՛ հանելուկը: Գրիր պատասխան-բառը և որոշիր վանկերի քանակը:

Ո՞ր թռչունն է գույնզգույն,
Որ մեզ կրկնում է իսկույն:



_____

21. Արտագրիր բառը ճիշտ տեղում:

Թռչունը	_____ :	լողում է
Ձուկը	_____ :	վազում է
Օձը	_____ :	ցատկոտում է
Նապաստակը	_____ :	թռչում է
Ձին	_____ :	սողում է

22. ա) Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր միայն թռչունների անվանումները:

Բու, թութակ, մեղու, արագիլ, ագռավ, զատիկ, սոխակ, բզեզ, ճանճ, մրջյուն

բու

բ) Ընդգծի՛ր միջատների անվանումները:

23. Արտագրի՛ր միայն այն բառերը, որոնց 2–րդ հնչյունը ձայնավոր է:

ծաղիկ, արև, հովիկ, դպրոց , բարև, հույս, լույս, բողբոջ, փողոց

ծաղիկ,

24. Ընտրի՛ր համապատասխան բառը և գրի՛ր:

Աշնան ամիս _____

(հունվար, մարտ, մայիս, սեպտեմբեր, դեկտեմբեր)

Տարվա եղանակ _____

(շաբաթ, արձակուրդ, հուլիս, աշուն, գիշեր)

Շաբաթն ունի _____

(5 օր, 10 օր, 7 օր, 12 օր, 14 օր)

Տարին ունի _____

(3 ամիս, 24 ամիս, 12 ամիս, 4 ամիս, 7 ամիս)

25. Գուշակի՛ր ամսվա անվանումը և գրի՛ր:

Սկսվում է տարին հունվար

Սկսվում է ուսումնական տարին _____

Սկսվում է ամառը _____

Աշնան 2–րդ ամիսը _____

Գարնան առաջին ամիսը _____

Ամենակարճ ամիսը _____

26. Կարդա՛ փոխադրամիջոցների անվանումները: Արտագրի՛ր միայն ձայնավորով սկսվողները:

գնացք, ուղղաթիռ, ավտոբուս, նավ, ինքնաթիռ, հեծանիվ

ուղղաթիռ,

27. Կարդա՛ գույների անվանումները: Արտագրի՛ր և ընդգծի՛ր բոլոր ձայնավորները:

կանաչ, կապույտ, դեղին, կարմիր, սև, սպիտակ, մոխրագույն

28. ա) Արտագրի՛ր շաբաթվա օրերը ճիշտ հերթականությամբ:

չորեքշաբթի, ուրբաթ, երկուշաբթի, շաբաթ, երեքշաբթի, կիրակի, հինգշաբթի

երկուշաբթի,

բ) Կարմիրով ընդգծի՛ր հանգստյան օրերը:

29. Կարդա՛ նախադասությունը: Արտագրի՛ր գույների անվանումները:

Ջրաներկս յոթ գույն ունի՝ մոխրագույն, կանաչ, կապույտ, դեղին, կարմիր, սև, սպիտակ:

30. Նշված գույներով գունավորի՛ր պատկերված առարկաները:

կանաչ թռչուն	կարմիր վարդ	կապույտ ջրաման
		

31. Արտագրի՛ր բառերը և որոշի՛ր յուրաքանչյուր բառի ձայնավորների քանակը:

խնդրել, ներեցեք, շնորհակալություն, վանդակ, դանդաղ, դատարկ, վերադառնալ, վարդ, թռչուն, կողպեք

խնդրել 1 ,

32. Արտագրի՛ր բառերը և որոշի՛ր հնչյունների քանակը:

ջութակ, սարդ, զինվոր, ճուտիկ, հեծանիվ, ինքնաթիռ

ջութակ–5

33. Արտագրիր գույների անվանումների միայն բաղաձայնները, իսկ ձայնավորների փոխարեն դիր գծիկ:

կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, սպիտակ, մոխրագույն

կ–ր մ–ր,

34. Գծիկների վրա գրիր բաց թողնված ձայնավորները և կարդա՛ ստացված բառերը:

մ ռւ կ
գ ___ րք
տ ___ ռ
բ ___ րև
ք ___ ջ
___ րև
թռչ ___ ն



35. Կարդա՛ առածները: Ընդգծիր **ա** ձայնավոր ունեցող բառերը:

Շատ կարդացողը հասկացող կլինի:

Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:

36. Կարդա՛ բառակապակցությունը, դիմացը գրիր փակագծում տրված բառերից համապատասխանը:

փշոտ կենդանի _____

ութերորդ ամիսը _____

որս անող _____

գայլերի խումբ _____

սողացող կենդանի _____

(ոհմակ, օձ, ոզնի, որսորդ, օգոստոս)

37. ա) Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր դրանցում կրկնվող բառը:

Ոզնին ունի 36 ատամ և շատ փշեր:

Աշնանը ոզնին չոր տերևներից որջ է պատրաստում:

Ոզնին ուտում է սնկեր, հատապտուղներ, խոտ:

բ) Քանի՞ ատամ ունի ոզնին: Գրի՛ր վանդակում:

38. Կարդա՛, որոշի՛ր հանելուկի պատասխանը և գրի՛ր:

Ծառի տակ, թփի տակ,

Փշով պատված փոքրիկ պարկ: _____

39. Կարդա՛: Արտագրի՛ր **ո** տառով սկսվող բառերը:

ոզնի, օձ, օգոստոս, որսորդ, օպերա, ոսկի, որակ, օրագիր, օրացույց, ոհմակ, օճառ

ոզնի, _____

_____

40. Կարդա՛: Արտագրի՛ր **ե** տառով սկսվող բառերը:

Էմիլ, ելակ, երկու, էշ, երեք, էկրան, Էմմա, երազ, երգ, էջ, երկինք, ես

ելակ, _____

_____

41. Կարդա՛ բառազույգերը: Կանաչ գույնով ընդգծի՛ր **ո, ե** տառերը.

ո	ե
ող–տող	եզ–դեզ
որս–չորս	երեք–կերեք
օր–լոր	էջ–մեջ

42. ա) Գրի՛ր պատկերված առարկաների անվանումները:

2 երկու

3 _____

_____


_____

_____

_____

բ) Ընդգծի՛ր **ո, ե** տառերը:

43. Կատարի՛ր թվաբանական գործողությունը: Գրի՛ր պատասխանը տառերով:

1 + 1 = երկու

2 + 1 = _____

2 + 2 = _____

3 + 1 = _____

4 + 4 = _____

4 + 5 = _____

5 + 5 = _____

44. ա) Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր թռչունների անվանումները:

Փայտփորիկը կտուցով փորում է ծառը:

Արագիլը գարնան ավետաբերն է:

Թութակը կարող է կրկնել մարդու խոսքը:

բ) Արտագրի՛ր ձայնավորով սկսվող նախադասությունը:

_____

45. Գուշակի՛ր հանելուկները և գրի՛ր պատասխան–բառերը:

Երկու սիրուն աչիկ ունի,
✂աձև պոչիկ ունի: _____

Ջուրն է մտնում ամեն օր,
Բայց մնում է միշտ էլ չոր: _____

46. Կարդա՛ կենդանիների անվանումները: Արտագրի՛ր միայն 1 վանկ ունեցողները:

նապաստակ, ձի, կատու, փիղ, շուն, ոզնի, օձ

ձի, _____

47. Գծով միացրու՛ նախադասությունը համապատասխան նկարին:

Մլավում է:

Հաչում է:

Կչկչում է:

Մռնչում է:

Կռկռում է:



48. Արտագրի՛ր տրված բառերի 3–րդ տառը: Ստացի՛ր նոր բառ և կարդա՛:

անընդհատ, ջինջ, ոսկի, երեք, բարև

_____

49. Կարդա՛ հարցը: Դիմացը գրի՛ր պատասխանը 1 բառով:

– Ի՞նչ է անունդ: _____

– Ո՞ր ամսին ես ծնվել: _____

– Քո սիրած գույնը: _____

– Քո սիրած միրգը: _____

– Քո սիրած կենդանին: _____

50. Արտագրի՛ր տրված բառերը համապատասխան գծապատկերի տակ:

օր, կանաչ, անտառ, գորտ, ձուկ, աշխարհի ջուր, ցամաք, գազան, լեռ, կոկորդ, գլուխ, ափ, շատ



օր



կանաչ

51. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր միավանկ բառերը:

Մի օր կենդանիները հավաքվեցին որոշելու, թե ով որտեղ ապրի: Ձկները հարմար գտան ապրել ջրում: Շատ կենդանիներ ընտրեցին լեռները, անտառներն ու մարգագետինները: Իսկ կանաչ գորտը մինչև օրս չի որոշել, թե որտեղ ապրի:

Մի,

բ) Գրի՛ր հարցերի պատասխանը մեկ բառով:

1. Ձկները որտե՞ղ որոշեցին ապրել: _____
2. Ի՞նչ գույնի էր գորտը: _____
3. Գորտը որոշե՞լ էր, թե որտեղ ապրի: _____

52. Կարդա՛ տրված երկվանկ բառերը: Կորագծերով ընդգծի՛ր վանկերը:

մկրատ, գլխարկ, հնչյուն, խնդրել, ձկներ, դդում, նկար, կկու, գդալ

53. Արտագրի՛ր բառերը համապատասխան գծապատկերի տակ:

մրջյուն, սերմ, մեխակ, սևուկ, շտապել, դդում, կորիզ, համառ, քաղցր, մեջք, ճպուռ, ջանք, գործ, փոքրիկ, վազել, տանել, ընկնել, հաշտվել

սերմ	մեխակ	մրջյուն

54. ա) Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր կանաչով առանձնացված բառերի բաղաձայնները:

Այստեղ մի տուն նկարեմ,
Կողքին մի ծառ նկարեմ,
Վրան մի բույն նկարեմ,
Մեջը թռչուն նկարեմ:

բ) Ի՞նչ անհամապատասխանություն ես նկատում նկարի և քառատողի միջև:

55. ա) Կարդա՛ լրացնելով բաց թողած տառերը:

մայր ___ կ	(ի)	աս ___ ղ	(տ)
դ ___ շտ	(ա)	ջու ___	(ր)
բու ___ ն	(յ)	գիշ ___ ր	(ե)
կարմի ___	(ր)	կա ___ աչ	(կ)
վար ___	(դ)	մար ___	(դ)

բ) Արտագրի՛ր բառերը՝ ընդգծելով լրացրած տառը:

Մայրիկ,

56. ա) Դիտի՛ր պատկերված առարկաները: Ասա՛՝ ո՞ր տառն է բաց թողած բոլոր բառերում:

___ եղու

___ րջյուն

___ այրիկ


կար ___ իր

___ անուկ

բ) Արտագրի՛ր բառերը՝ լրացնելով բաց թողած տառը: Կանաչով ընդգծի՛ր այդ տառը:

57. Կարդա՛ հանելուկը: Դո՛ւրս գրիր գծապատկերին համապատասխանող բառերը:

Ի՞նչ միջատ է ժրաջան,
Ճարտարապետ՝ աննման,
Ծաղկից ծաղիկ թևածում՝
Աշխատում է օրնիբուն,
Բերքը տալիս է մարդուն:

58. Արտագրի՛ր նախադասությունը: Կանաչով ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

Բան դուրս չի գա նրանց համար, ովքեր ջանք չեն թափում և միայն հաշտվում են անհաջողությունների հետ:

59. Կարդա՛ քառատողը: Կանաչով ընդգծի՛ր այն բառերը, որոնք կրկնվել են:

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունի՛կ, նախշուն կաքավիկ:

60. Կարդա՛ բառաշարքերը: Կապույտով ընդգծիր փոխված տառը:

1. վարդ, մարդ, սարդ, զարդ
2. բույն, գույն, նույն, թույն

61. Որոշիր պատկերված տառը և գրիր գծիկների վրա: Կարդա՛ նախադասությունը:

Ե___ մայրիկի___ շատ եմ ___իրում:

62. Միացրո՛ւ վանկերը և գրիր ստացված բառերը:



63. ա) Կարդա՛ պատմվածքը: Կանաչով ընդգծիր **մրջյուն, փիղ** բառերը:

Փիղն ու մրջյունները

Մի անգամ 2 մրջյուն վերադառնում էին մրջնանոց: Ճանապարհին նրանց առջև հայտնվեղ փիղը:

–Կանգնի՛ր, տեղիցդ չշարժվես,– կարգադրեց մրջյուններից մեկը: Սրանից դենը մեր տարածքն է...

–իսկ եթե չլսես,– լրացրեց մյուսը,– մենք քեզ կստիպենք...

–Երկուսդ մեկի դեմ,– վախեցած բացականչեց փիղը,– անարդար է:

բ) Տեքստից արտագրիր առնվազն 2 միավանկ բառ:

_____

64. Լրացրո՛ւ բաց թողած բառը փակագծում տրվածներից:

Փիղը կենդանի է: Մրջյունը միջատ է:

Կաքավը _____ է:

Խնձորը _____ է:

Կարմիրը _____ է: (միրգ, գույն, թռչուն)

65. Արտագրի՛ր բառերը համապատասխան տողի վրա:

դերձակ, բժիշկ, խոհարար, օդաչու, պարուհի, կոշկակար

Դերձակը հագուստ է կարում:

_____ կոշիկ է կարում:

_____ ինքնաթիռ է վարում:

_____ պարում է:

_____ հիվանդներին է բուժում:

_____ կերակուր է պատրաստում:

66. ա) Կարդա՛ հեքիաթից բերված հատվածը: Գտի՛ր և ընդգծի՛ր **փիղ** բառը:

Կար–չկար մի մեծ փիղ կար: Այս փիղն իր կնոջ ու տղայի հետ ապրում էր գազանանոցում:

Հայր փիղը շատ մեծ էր: Մայր փիղն էլ էր մեծ: Փղերն ընդհանրապես փոքր լինո՛ւմ են:

Մի օր փիղ մայրիկն ու փղիկը տեսան, որ փիղ հայրիկը կանգնել է գլխի վրա...

բ) Որտե՞ղ էր ապրում փղերի ընտանիքը: Գրի՛ր պատասխան–բառը:

_____

67. Կարդա՛ բառակապակցությունները: Հավելված 3-ից ընտրի՛ր նկարները և տեղադրի՛ր ճիշտ տեղում:

գույնզգույն փուչիկներ **տոնական տորթ** **վառվող մոմեր**

գեղեցիկ ծաղիկներ **համեղ կոնֆետներ** **դեղին գնդակ**

68. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր **և** ունեցող բառերը:

Գևորգն ու Լևոնը Երևանից գնացին Սևան: Օրն արևոտ էր, և նրանք որոշեցին լողալ Սևանա լճում: Լևոնի քույրը՝ Տաթևը, ևս միացավ նրանց:

Գևորգ,

69. Կարդա՛: Արտագրի՛ր բառավերջում 2 բաղաձայն ունեցող բառերը:

մարդ, աշխարհ, վերջ, բույն, վարդ, տարածք, ճանապարհ,մրջյուն, երեկո, կենդանի, փիղ, խաղալիք, ժամացույց

70. ա) Կարդա՛ «Տատիկի ժամացույցը» պատմվածքից մի հատված: Կանաչով ընդգծի՛ր **խաղալիք** բառը: Հաշվի՛ր ընդգծված բառերը և ասա՛ թիվը:

Դորենը սիրում էր քանդել իր խաղալիքները:

–Հետաքրքիր է, թե իմ ռոբոտը ինչպե՞ս է շարժվում,– ասում է նա ու քանդում:

–Հետաքրքիր է, թե ինչպե՞ս է հեռախոսը զնգում:

Պարզելու համար նա մաս–մաս արեց հեռախոսը:

Քանդած խաղալիքների մասերը Դորենը շաղ էր տալիս ամբողջ տնով մեկ: Նա պոկել էր ռոբոտի գլուխը, նրա մեքենան առանց անիվների էր, իսկ ինքնաթիռը՝ առանց թևերի:

բ) Գրի՛ր պատմվածքի հերոսի անունը:

_____

71. Գրի՛ր պատկերված առարկաների անվանումներն ըստ օրինակի:

ի՞նչ ժամացույց



ի՞նչ _____

ի՞նչ _____



ի՞նչ _____

ո՞վ բժիշկ

ո՞վ _____

ո՞վ _____

ո՞վ _____

72. Արտագրիր բառերը համապատասխան սյունակներում:

Սևան, բարև, Սևակ, Լևոն, վերև, տերև, Երևան, կեղև, սևուկ, անձրև, արև, Տաթևիկ

և -ը բառամիջում	**և -ը բառավերջում**
Սևան	բարև

73. ա) Կարդա՛ տեքստը: Դուրս գրի՛ր քո թշնամիների անվանումները:

Ճանաչիր քո թշնամիներին

Դու բարեկամներ շատ ունես: Բայց ունես նաև թշնամիներ: Քո ամենավտանգավոր թշնամիներն են ծուլությունը, պարծենկոտությունը, նախանձը, փնթիությունը, վախկոտությունը, խաբելը, դավաճանությունը: Պետք է շուտ ազատվես դրանցից:

_____

_____

բ) Ասա՛ քո բարեկամների անվանումները: Գրի՛ր դրանցից առնվազն 2–ը:

_____

74. Կարդա՛ նախադասությունները: Դո՛ւրս գրիր մարդկանց անունները:

Հայկ Նահապետը քաջ էր և ուժեղ: Նա հաղթեց Բելին: Այդ օրվանից մեր երկիրը կոչվում է Հայաստան:

_____

75. Արտագրի՛ր բառերը համապատասխան սյունակներում:

Հայկ, Աշտարակ, Երևան, Մելիք, Գյումրի, Բել, Արմեն, Դավիթ, Վանաձոր, Հրազդան

Մարդկանց անուններ	Քաղաքների անուններ

76. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր 1–ին նախադասությունը:

Անդերսենը յուրահատուկ երեխա էր: Նա չէր սիրում խաղալ հասակակիցների հետ: Նա սիրում էր տիկնիկային ներկայացումներ բեմադրել, պատմություններ էր հորինում ու անվերջ երազում...

Անդերսենը հավատում էր, որ մի օր կհասնի իր երազանքներին, կդառնա հայտնի հեքիաթագիր:

_____

բ) Ո՞ւմ մասին էր պատմությունը: Գրի՛ր նրա անունը:

_____

77. Տրված բառերից մեկը միրգ չէ: Կանաչով ընդգծի՛ր այն:

տանձ	վարունգ	ծիրան
դեղձ	խնձոր	խաղող

78. ա) Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր վերջին նախադասությունը:

Մսրա Մելիքը սարի չափ մի հսկա էր: Նա մեծ զորքով գալիս է դեպի Հայաստան: Դավիթը վերցնում է հրեղեն ձին և գնում Մելիքի դեմ կռվի: Կռվում Դավիթը հաղթում է Մելիքին:

_____

բ) Գրի՛ր հաղթանակ տարած հերոսի անունը:

_____

79. Շարունակի՛ր ըստ օրինակի:

ճուտիկ

կարապ

տիկնիկ

տերև


ճուտիկներ

_____


_____

_____

հեքիաթ _____

երազանք _____

80. Տրված բառերից ո՞րն է աշխատանքային գործիք: Կապույտով ընդգծի՛ր այն:

շերեփ	սղոց	բաժակ
ափսե	գիրք	գրիչ

81. Փոխի՛ր բառերը ըստ օրինակի:

քաղաքներ	-	քաղաք	գյուղ	-	գյուղեր
դպրոցներ	-	_____	խաղ	-	_____
հեքիաթներ	-	_____	ձի	-	_____
պաղպաղակներ	-	_____	երգ	-	_____
շատրվաններ	-	_____	պար	-	_____
հեռախոսներ	-	_____	կառք	-	_____

82. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր 2–րդը և որոշի՛ր բառերի քանակը:

Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է:
Էրեբունին կառուցել է Արգիշտի թագավորը:
Երևանի շենքերը կառուցված են վարդագույն տուֆից:

---

83. Կարդա՛ նախադասությունը: Կանաչով ընդգծի՛ր **հայերեն** բառը: Ասա՛՝ քանի՞ բառ ընդգծեցիր:

Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է, որտեղ բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն:

84. Արտագրի՛ր Երևանի օհներգը: Ընդգծի՛ր տեղանունները:

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

85. Արտագրիր տրված բառերը համապատասխան սյունակներում:

ձկնորս, երկիր, գիրք, վարորդ, տղա բաժակ, տատիկ, թանգարան, աղջիկ, թագավոր, հեռուստացույց, պաղպաղակ

Ինչ	Ո՞վ
երկիր	ձկնորս

86. ա) Կարդա՛ «Կախարդված հանդիսատեսը» պատմվածքից բերված հատվածը: Արտագրիր **հոլ** բառն ունեցող նախադասությունը:

Դահլիճում համերգ էին տալիս փոքրիկ երաժիշտները: Համերգավարը հետնաբեմում փնտրում էր Առնոյին: Բեմ դուրս գալու հերթը նրանն էր:

Համերգավարի ձայնը լսելուն պես պատանին վազեվազ հայտնվեց բեմում: Դահլիճին խոնարհվելիս բեմահարթակին թափվեցին կավիճ, հոլ, գունավոր մատիտներ:

Մեկ րոպե անց դահլիճը կախարդված լսում էր փոքրիկ Առնո Բաբաջանյանի կատարումը:

_____

բ) Ո՞ւմ մասին էր պատմությունը: Գրիր նրա անունը:

_____

87. Արտագրի՛ր տրված բառերը համապատասխան սյունակներում:

շներ, հոլեր, մատիտներ, մայրեր, թմբուկներ, եղբայրներ, դհոլներ, զինվորներ, հանդիսատեսներ, երգիչներ, քույրեր, երկրներ

Ինչե՞ր	Ովքե՞ր
շներ	մայրեր

88. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր այն նախադասությունը, որում կհանդիպես **Լեոնիդ Ենգիբարյան** անվանը:

Ծաղրածուների արքան

Լյոնյան մասնակցում էր իր մայրիկի կազմակերպած ընտանեկան համերգներին: Հետո նա տարվեց տիկնիկային թատրոնով:

Փոքր տարիքում Լյոնյան հորինեց խաղ՝ սեղանի ֆուտբոլ: Նա ստվարաթղթից ֆուտբոլի մեծ դաշտ պատրաստեց, իսկ ֆուտբոլիստների դերում կոճակներն էին: Ամեն կոճակ որևէ ֆուտբոլիստի անուն ուներ: Այդ խաղը գրավել էր բոլոր երխաներին:

Լյոնյան՝ Լեոնիդ Ենգիբարյանը ամենից շատ սիրում էր ծով, աշուն, Վան Գոգին և Պուշկինին:

89. Նշի՛ր մեկ առարկա անվանող բառերը:

- [x] դուռ
- [ ] քաղաքներ
- [ ] մատներ
- [ ] փողոց
- [ ] ձեռք
- [ ] խաղեր
- [ ] ծով
- [ ] երեխաներ
- [ ] կոճակներ
- [ ] դաշտ

90. ա) Կարդա՛ նախադասությունները: Ասա՛ դրանք սկսվում են մեծատառո՞վ, թե՞ փոքրատառով:

Կրկեսում շատ կենդանիներ կան:

Ծաղրածուն ծիծաղեցնում է երեխաներին:

Գիրքը մեր լավ բարեկամն է:

բ) Որոշի՛ր՝ 1–ին նախադասությունը քանի՞ բառից է կազմված:

91. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր **շախմատ** բառը:

Փոքրիկ Տիգրանը սիրում էր հետաքրքրաշարժ խաղեր:

Մի օր Տիգրանի ձեռքն ընկավ շախմատի մասին մի գիրք: Նա կարդաց այդ գիրքը և ամեն ինչ փոխվեց: Տիգրանը տարվեց շախմատով:

Տիգրանը տասնվեց տարեկանում դարձավ պատանիների առաջնության չեմպիոն:

Շատ տարիներ անց Տիգրան Պետրոսյանը դարձավ շախմատի աշխարհի իններորդ չեմպիոնը:

բ) Գրի՛ր պատմության հերոսի անունը:

_____

92. Արտագրի՛ր բառակապակցությունները: Ընդգծի՛ր ***ինչ՞ եր*** հարցին պատասխանող բառերը:

փոքրիկ Տիգրան _____

պատկերազարդ գիրք _____

հետաքրքրաշարժ խաղեր _____

ընդարձակ հրապարակներ _____

զովաշունչ զբոսայգիներ _____

93. Գրի՛ր բառազույգն ընդհանրացնող անվանումը:

գարուն, աշուն *տարվա եղանակ*

տանձ, խնձոր _____

բարդի, ուռենի _____

կատու, շուն _____

արագիլ, սոխակ _____

սեպտեմբեր, հոկտեմբեր _____

Նոր տարի, Մարտի 8 _____

երեքշաբթի, չորեքշաբթի _____

94. ա) Արտագրի՛ր քառատողը: Ընդգծի՛ր բոլոր տողերում կրկնված բառը:

Իմ հայրենիքն իմ մայրիկն է,
Իմ տունն է ու իմ հայրիկն է,
Իմ փողոցն է, իմ դպրոցն է,
Իմ բակն է, իմ ծաղկանոցն է:

_____

_____

_____

_____

բ) Գրի՛ր՝ ո՞րն է քո հայրենիքը:

_____

95. Կարդա՛: Արտագրի՛ր այն նախադասությունները, որոնք քեզ են վերաբերում:

Ես օգնում եմ մայրիկիս տնային գործերում:
Խնամում եմ շրջապատի բույսերը:
Կերակրում եմ թռչուններին:
Մաքուր եմ պահում իմ շրջապատը:
Աղբը գցում եմ աղբամանը:

_____

_____

_____

_____

_____

96. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր ձայնավոր հնչյունով սկսվող նախադասությունը:

Հովհաննես Թումանյանը ծնվել է Լոռվա Դսեղ գյուղում:

Երեխա ժամանակ Հովհաննեսը շատ լավ «Կոճի» էր խաղում: Կոճին կովի մանր ոսկորներով խաղ է: Ընկերներով շատ էին սիրում պահմտոցի խաղալ:

_____

_____

բ) Գրի՛ր Թումանյանի անունը: Որոշի՛ր հնչյունների քանակը:

_____

97. Արտագրի՛ր 4 տառ ունեցող բառերը:

լույս, երազ, աշխարհ, հեքիաթ, գյուղ, ոտանավոր, աղջիկ, աստղ, հսկա, ոսկոր, գագաթ, բլուր, ընկեր

_____

_____

98. Լրացրու՛ բառի պակասող վանկը և ստացի՛ր անուններ:

Առ _____

Տիգ _____

Շու _____

Սու _____

Մես _____

Դա _____

վիթ նո

շան ռոպ

ռան սան

99. Կարդա՛ բանաստեղծությունը: Արտագրի՛ր ընդգծված բառերը: Որոշի՛ր դրանցում ձայնավորների և բաղաձայնների քանակը:

Իմ տատիկի հեքիաթները

Ես սիրում եմ իմ տատիկին,
Նա հեքիաթներ գիտե շատ:
Նստեցնում է ինձ իր կողքին
Ու պատմում է անընդհատ:
Իմ տատիկի հեքիաթները
Երկարում են օր–օրի,
Այնքան շատ են՝ չեն վերջանում,
Թեկուզ պատմի մի տարի:

---

100. Կարդա՛ հարցերը: Պատասխանը գրի՛ր մեկ բառով:

Կորյունը ո՞ր կենդանու ձագն է: Հոյուժի:

Ո՞ր կենդանին է մեղր սիրում: _____

Ո՞րն է շաբաթվա 7–րդ օրը: _____

Ո՞րն է տարվա վերջին ամիսը: _____

Գրիչով ի՞նչ են անում: _____

101. Վանկատի՛ր տրված բառերը: Արտագրի՛ր 4 վանկ ունեցողները:

աշխարհ, ընտանիք, համերաշխ, դպրոց, ուրախանալ, սովորել, նախադասություն, չարաճճի, հեռախոս, երեխաներ, կամակոր

---

102. ա) Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր մեծատառով գրված բառերը:

Հայաստանը աչքի է ընկնում իր կապույտ երկնքով, պայծառ արևով:
Ամենաբարձր ջրվեժը Ջերմուկ քաղաքում է:
Հայաստանի ամենամեծ լիճը Սևանն է:
Սևանա լիճ են թափվում 28 գետ ու գետակ:
Արագածը Հայաստանի ամենաբարձր լեռն է:
Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է: Այն կառուցել է Արգիշտի արքան և կոչել է Էրեբունի:

բ) Հարցի գույնով ընդգծի՛ր պատասխան–նախադասությունը:

1. **Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը:**
2. **Ո՞րն է Հայաստանի ամենաբարձր լեռը:**
3. **Ո՞րն է Հայաստանի ամենամեծ լիճը:**
4. **Ո՞ր քաղաքում է Հայաստանի ամենաբարձր ջրվեժը:**
5. **Ո՞վ է կառուցել Երևանը:**

103. Արտագրի՛ր՝ տրված օրինակով լրացնելով բառազույգերը: Կարդա՛ ստացված բառերը և որոշի՛ր դրանց տարբերությունը:

կա — չկա

ասել _____

ուզել _____

անել _____

ուտել _____

խմել _____

գնալ _____

104. Կարդա՛ քառատողը: Բառերում գտի՛ր և ընդգծի՛ր **հայ** բառը:

Իմ հայրենիքն իմ մայրիկն է,
Իմ տունն է ու իմ հայրիկն է,
Իմ փողոցն է, իմ դպրոցն է,
Իմ բակն է, իմ ծաղկանոցն է:

105. Կարդա՝ քառատողը: Արտագրի՛ր ***և*** տառը ունեցող բառերը:

Իմ հայրենիքն իմ Սևանն է,
Զվարթնոցն ու Երևանն է,
Հեքիաթներն են Թումանյանի,
Հրաշքները՝ Հայաստանի:

---

106. Կարդա՛ հարցերը: Պատասխանները գրի՛ր 1 բառով:

Ի՞նչ է քո անունը: _____

Ի՞նչ է քո ազգանունը: _____

Ո՞րն է քո հայրենիքը: _____

Որտե՞ղ ես դու ապրում: _____

Քո ծննդյան ամիսը: _____

107. Կարդա՛ շուտասելուկը: Դուրս գրի՛ր իրար կողքի 3 բաղաձայն ունեցող բառը:

Ճչան կաչաղակը
Ճչում է, թող ճչա,
Չի ճչում, թող չճչա:

_____

108. Կարդա՛ «Անուշ անուններ» բանաստեղծությունը: Որոշի՛ր՝ քանի՞ անգամ է գործածվել **անուշ** բառը և գրի՛ր թիվը վանդակում:

Անուշ անուններ

Մայրիկն անուշ անուն է,
Մայրենին՝ էլ ավելի,
Հայրիկն անուշ անուն է,
Հայրենին՝ էլ ավելի:

Անուններն այդ անուշ
Մեզ հետ աճում, բարձրանում,
Քաղցրանում են օրեցօր
Ավելի ու ավելի:

109. Գրի՛ր համադասարանցիներիդ անունները տրված աղյուսակում:

Տղաներ	Աղջիկներ

110. Փակագծում տրված բառերից ընտրիր իմաստով մոտը և արտագրիր ճիշտ տեղում:

(գեղեցիկ, քաղցր, ճերմակ, աշխույժ, ծիծաղկոտ)

զվարթ ___աշխույժ___

սիրուն _____

ուրախ _____

սպիտակ _____

անուշ _____

111. Գծով համապատասխանեցրու կենդանիների ու նրանց ձագերի անվանումները:

խոզ	հորթ
այծ	քոթոթ
ձի	գառնուկ
արջ	կորյուն
առյուծ	խոճկոր
կով	լակոտ
ոչխար	քուռակ
շուն	ուլիկ

112. Կարդա՛ տեքստը: Արտագրիր այն նախադասությունը, որից իմանում ենք, թե ինչ էր արել Լուսիկը:

Լուսիկն ու Սուսիկը շատ նման էին իրար: Հարևանները չէին կարողանում տարբերել նրանց:

Սուսիկը խաղում էր ջրի հետ: Լուսիկը ջրել էր ծաղիկները, մաքրել բակը, դասավորել խաղալիքները:

_____

_____

113. Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր կրկնված բառերը:

Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն:

Մարդը գեղեցիկ է իր արած գործերով:

114. Փակագծում տրված բառերը արտագրի՛ր ճիշտ տեղերում:

(ոհմակ, երամակ, հոտ, երամ, նախիր)

Ձիերի խումբը կոչվում է ___երամակ___:

Գայլերի խումբը կոչվում է _____:

Թռչունների խումբը կոչվում է _____:

Ոչխարների խումբը կոչվում է _____:

Կովերի խումբը կոչվում է _____:

115. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծի՛ր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

Ճուտը ասաց ճնճղուկ մորը.
– Ձյուն է գալու, ցրտեց օրը:
– Ուրիշների նման ինչու՞
Տաք աշխարհ չենք մենք էլ թռչում:

116. Կարդա՛ շարունակությունը և կիմանաս ճնճղուկ մոր պատասխանը:

– Ինչպե՛ս ասեմ,– տխրեց մայրը
Լայն ու մեծ է այս աշխարհը,
Բայց սովոր է միշտ մեր ցեղը
Ապրել միայն ծնված տեղը:



117. Կարդա՛: Գրի՛ր պատասխան–բառը:

Այդ ե՞րբ է լինում

Դաշտերը՝ սպիտակ,
Բուքն է հեծեծում,
Սառույցով ծածկված
Գետերը լռում.
Այդ ե՞րբ է լինում: _____

118. Տրված բառերից կազմի՛ր գործողություն ցույց տվող բառեր և գրի՛ր:

երգ _____ երգել

պար _____

ներկ _____

մեխ _____

սանր _____

թերթ _____

նվագ _____

սանր _____

քանդակ _____

ծիծաղ _____

զանգ _____

119. ա) Կարդա՛ տեքստը: Գրի՛ր՝ ո՞վ է հայերենի առաջին ուսուցիչը:

Հայոց այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Մաշտոցը Հայաստանում բացեց առաջին դպրոցները և ինքն էլ դասավանդեց: Դրա համար էլ նրան անվանում են հայերենի առաջին ուսուցիչ:

_____

բ) Կապույտով ընդգծի՛ր բաղաձայնները:

120. Հայերենի ձայնավորները գրի՛ր կարմիր տնակում, բաղաձայնները՝ կապույտում:



121. Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր Արթուրի եղբոր խոսքերը:

Արթուրի եղբոր մոտ եկավ նրա ընկերը: Նա գլխարկը նետեց մի կողմ և դժգոհ ձայնով ասաց.

– Ամբողջ օրս կորավ:

Երբ ընկերը գնաց, Արթուրը եղբորը հարցրեց.

– Ինչպե՞ս կարող է օրը կորչել: Մի՞թե բոլոր օրերը մեկ չեն:

– Այն օրը, որի ընթացքում մարդը ոչ մի օգտակար գործ չի արել կամ ոչինչ չի սովորել, կորած օր է,– պատասխանեց եղբայրը:

_____

_____

122. ա) Նշվածներից որո՞նք ես դու կատարում: Գունավորի՛ր կից շրջանակը:

- ◯ Խաղում եմ:
- ◯ Լվացվում եմ:
- ◯ Ճաշում եմ:
- ◯ Դասերս եմ պատրաստում:
- ◯ Օգնում եմ մայրիկիս:
- ◯ Նկարում եմ:
- ◯ Գիրք եմ կարդում:

բ) Գրի՛ր՝ էլ ի՞նչ ես անում:

_____

_____

_____

_____

123. Կարդա՛ առածները: Ընդգծի՛ր կրկնված բառը:

Ժամանակը ոսկի է:

Ամեն ինչ իր ժամանակն ունի:

124. Տրված բառերը ըստ օրինակի արտագրի՛ր աղյուսակում:

աշխարհ, մարդ, իմանալ, տիեզերք, հիանալ, գաղտնիք, աստղ, թափանցել, ծափահարել, գիտնական, հավաքել, բարձրանալ

Առարկա (ո՞վ, ի՞նչ)	Գործողություն (ի՞նչ անել)
աշխարհ	իմանալ

125. Փակագծում տրված բառերից ընտրիր իմաստով հակառակը և արտագրիր ճիշտ տեղում:

(բարձր, գեղեցիկ, վատ, քաղցր, թեթև, վերև, վախկոտ, աշխատասեր)

ծանր ____թեթև____

ներքև _____

լավ _____

ցածր _____

ծույլ _____

տգեղ _____

դառը _____

քաջ _____

126. Կռահիր թաքնված տառերը և ամողջացրու բառերը: Կարդա՛ դրանք:

թ___չել

ճա___փա

օ___նել

խ___ճիթ

ե___բայր

___րս

Եր___ան

խա___քար

Ս___ան

127. ա) Արտագրիր բանաստեղծության քառատողը: Ընդգծիր կրկնվող բառերը:

Ջերմ արևը նայեց ծովին,
Ծովից ջուրը բարձրացավ,
Կաթիլ–կաթիլ նստեց շողին
Ու երկնքում ամպ դարձավ:



բ) Ինչպիսի՞ն էր արևը: Արտագրիր այդ բառը:

_____

128. Արտագրիր բառակապակցությունները: Ընդգծիր **ինչպիսի՞** հարցին պատասխանող բառերը:

պայծառ արև, թուխ ամպ, սառնորակ ջուր, հորդառատ անձրև, հետաքրքիր գիրք, հմայիչ ժպիտ

պայծառ արև

_____

_____

129. Տրված գործողություն ցույց տվող բառերից կազմի՛ր առարկա ցույց տվող բառեր և գրիր:

երգել	երգ	նվագել	_____
պարել	_____	սանրել	_____
ներկել	_____	քանդակել	_____
մեխել	_____	ծիծաղել	_____
սանրել	_____	զանգել	_____
թերթել	_____		

130. Արտագրիր այն բառերը, որոնցում կրկնվում է **արև** արմատը:

շողշողուն, արևոտ, արևաշող, ծիծաղկոտ, Արևիկ, արևափայլ, ոսկեշող, արևածաղիկ, ծաղկաման

արևոտ,

131. ա) Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծիր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ,
Որ ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում,
Մի հին խրճիթում,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

բ) Դուրս գրիր հատկանիշ ցույց տվող բառերը:

(ինչպիսի՞) _____ մայր

(ինչպիսի՞) _____ տղա

(ինչպիսի՞) _____ խրճիթ

132. ա) Կարդա՛ նախադասությունները: Վանդակում գրի՛ր՝ քանի՞ գույն ունի ծիածանը:

Ծիածանը ծնվում է, երբ միանում են արևն ու անձրևը:

Ծիածանը ունի յոթ գույն՝ կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն:

բ) Գունավորի՛ր ծիածանը թվարկված գույներով:



133. Կարդա՛ հանելուկը: Ընդգծի՛ր կրկնվող բառը: Գրի՛ր պատասխանը:

Մաշկը ճերմակ է,
Ինքը ճերմակ է,
Թեև շատ սառն է,
Բայց տաք վերմակ է:

_____

134. Տրված բառերում ընդգծի՛ր **աստղ**–ը:

Աստղիկ, աստղով, գիսաստղ, աստղային, աստղադիտարան, աստղագետ, անաստղ

135. Կարդա՛ տեքստը: Ընդգծված բառերը կարդա՛ 2 անգամ:

Ձմռան պարը

Ձմեռ է: Ցրտերը գալիս են թե չէ, վրա է հասնում ձյունը: Նրա սպիտակ, փափուկ փաթիլները, ասես պար բռնած, ցած են թափվում: Գետինը ծածկվում է սպիտակ սավանով: Սպիտակ սավան են հագնում ծառերն ու թփերը, ծաղիկներն ու խոտերը:

136. Կարդա՛ հանելուկը: Գրի՛ր պատասխան–բառը:

Այդ ե՞րբ է լինում

Դաշտերը՝ սպիտակ,
Բուքն է հեծեծում,
Սառույցով ծածկված
Գետերը լռում.
Այդ ե՞րբ է լինում: _____

137. Կարդա՛ բառերը: Ընդգծի՛ր **երազ** արմատը:

Երազիկ, երազել, երազող, երազային, երազանք, երազկոտ

138. Կարդա՛ պարզ բառերը: Արտագրի՛ր ածանցավորները:

Պարզ	Բարդ	Ածանցավոր
ճյուղ	խորհրդանիշ	անձայն
ձայն	զրուցակից	խաղաղություն
ձմեռ	արագաշարժ	հանդարտորեն
մարդ	երաշտահավ	ձմեռային
աստղ	կեսօր	աստղալից
արև	հեռախոս	արևոտ

_____

_____

139. Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր: Ընդգծի՛ր **ր, ռ** տառերը:

Հայկը հազիվ էր հասցնում հանգստանալ. հեռախոսը հրապուրում է, հեռուստացույցը կանչում է, համակարգիչը հրավիրում է, համացանցը հետաքրքրում է:

140. Կարդա՛ առարկա ցույց տվող բառերը: Արտագրի՛ր հատկանիշ ցույց տվող բառերը:

Առարկա	**Գործողություն**	**Հատկանիշ**
աստղ	երգել	ուրախ
արև	պարել	տխուր
մուրճ	սովորել	հանգիստ
կիթառ	նվագել	փոքրիկ
կացին	լինել	սուր
դաշնամուր	շինել	փոքրիկ

141. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծված բառերը կարդա՛ 2 անգամ:

Մի անգամ փիղը հանդիպում է կապիկին և ասում.

– Տե՛ս, ես այնքան ուժեղ եմ, որ կարող եմ ծառը 2 մասի բաժանել: Կապիկը ծիծաղում է և պատասխանում.

– Ճիշտ է, դու ուժեղ ես, բայց նաև դանդաղաշարժ ես: Դու չես կարող

արագ վազել: Ավելի լավ է լինել արագաշարժ, քան ուժեղ:

բ) Համամի՞տ ես կապիկի ասածի հետ: Գրի՛ր պատասխանը մեկ բառով:

_____

142. Տրված բառերի կողքին արտագրի՛ր հակառակ իմաստ արտահայտող բառերը:

(անխելք, ցրված, դանդաղ, փոքր, թույլ, արագաշարժ, երիտասարդ)

ուժեղ _____

մեծ _____

արագ _____

ծեր _____

խելացի _____

ուշադիր _____

դանդաղաշարժ _____

143. Տրված բառերը արտագրի՛ր համապատասխան սյունակներում:

ձիուկ, ձկնիկ, ուլիկ, հորթուկ, մկնիկ, գառնուկ, փղիկ, շնիկ, խոզուկ, արջուկ, փիսիկ, ձագուկ

իկ	**ուկ**
ձկնիկ	ձիուկ

144. ա) Կարդա՛ պատմությունը: Վանկատած բառերը կարդա՛ 2 անգամ:

Գարնանային մի երեկո հովիվը հոտը սարից տուն էր քշում:

Հոտն ամբողջ օրը արածել էր ու հոգնել: Հովտում այծերից մեկը ծագուկ ունեցավ, սև ականջներով մի սիրունիկ ուլիկ: Հովիվը տեսավ, որ ուլիկի ոտքերը թույլ են, կանգնել չի կարողանում, գիրկն առավ:

բ) Ի՞նչ գույնի էին ուլիկի ականջները: Գունավորի՛ր:



145. Կարդա՛ պատմության շարունակությունը: Վանկատած բառերը կարդա՛ 2 անգամ:

Վաղ առավոտյան հովիվը ուլիկին գրկեց և դուրս եկավ բակ: Ուլիկին հեծանիվ նստեցրեց ու զգուշորեն հրեց: Ուլիկը շփոթվել էր: Չգիտեր՝ ինչ աներ: Առաջին անգամ էր իր ոտքերը զգում: Հովվի օգնությամբ մեկ էլ սկսեց քայլել:

Ուլիկն ուրախ մկկաց: Այդ օրվանից իր արտասովոր հենակով հոտի հետ սար էր բարձրանում: Ընկերների հետ խաղում էր, արածում հովտում:

146. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր **ծ**–ով սկսվող բառերը:

Ծառատունկ

Ամեն տարի երեխաները դպրոցի բակում ծառեր ու թփեր են տնկում: Ամեն կարևոր դեպք նրանք նշում են ծառ տնկելով: Ծովակն ու Ծովինարն էլ այս տարի դպրոցի բակում ծառ են տնկելու: Ծովակը որոշել է ծիրանի տնկել, իսկ Ծովինարը՝ թզենի:

_____

_____

բ) Հաշվի՛ր նախադասությունների քանակը և գրի՛ր վանդակում:

☐

147. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր 6 բառից կազմված նախադասությունը:

Հեռավոր մի երկրում ապրում էր փղերի մի մեծ ընտանիք: Այդ ընտանիքի փղերը շատ տարբեր էին: Կային նիհար ու գեր, բարձրահասակ ու ցածրահասակ, ծեր ու երիտասարդ փղեր: Բայց նրանք մի ընդհանուր բան ունեին՝ բոլորն էլ երջանիկ էին:

_____

_____

148. Տրված բառերում ընդգծի՛ր **մայր** արմատը:

<u>մայր</u>իկ, մայրենի, հայրենի, անտուն, մայրական, անմայր, կամար, մայրաբար, հայրիկ

149. Կարդա՛ ածանցավոր բառերը: Արտագրի՛ր բարդ բառերը:

Պարզ	Բարդ	Ածանցավոր
տուն	թոնրատուն	ուլիկ
քար	քարտաշ	տնային
ծառ	ծառատունկ	գունավոր
գույն	ծիրանագույն	անվախ
հայր	դանդաղաշարժ	մայրական
հեռու	հեռախոս	ձագուկ

_____

_____

150. Կատարի՛ր թվաբանական գործողությունը և կազմի՛ր ածանցավոր բառեր:

ան + պետք = _____

ան + օգուտ = _____

չ + տես = _____

դժ + բախտ = _____

դժ + գոհ = _____

ան + տուն = _____

151. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր նախադասությունների 1–ին բառերը:

Սկյուռը

Սկյուռը անտառի բնակիչների մեջ ամենալավ տնտեսուհին է: Ձմռան կեսին, երբ գայլերը սոված ոռնում են, սկյուռ կուշտ է: Սկյուռը ամենից

շատ սունկ է սիրում: Սկյուռը շատ է սիրում նաև չոր մրգեր:

բ) Հաշվի՛ր նախադասությունների քանակը և գրի՛ր վանդակում:

152. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր ձայնավորով սկսվողները:

Անահիտի մայրը խոհարար է:
Շողում է պայծառ արևը:
Այսօր դասարանով գնում ենք էքսկուրսիա:
Անին գիրք շատ է կարդում:

153. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր՝ ընդգծված բառը դարձնելով 1–ինը:

Շողում է պայծառ արևը:

Այգիներում բերքը հասնում է աշնանը:

Աշնանը դեղնում են տերևները:

154. Կարդա բարդ բառերը: Դրանցում ընդգծի՛ր արմատները և կարդա՛:

դասագիրք, հացման, խաղատուն, գայլաձուկ, շաքարման, տառասխալ, խաղասենյակ, դասացուցակ, կեսօր, ծառատունկ, հատապտուղ, վարդագույն

155. Ըստ նմուշի առանձնացրու՛ արմատն ու ածանցը:

	արմատ	**ածանց**
ուլիկ	ուլ	իկ
խոզուկ		
բառարան		
դասարան		
սալորենի		
մայրենի		
հայրական		

156. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր միավանկ բառերը:

Սիրի՛ր այգի, ծիլ ու անտառ,
Օգուտ է մեզ ամեն մի ծառ:
Ծառն է տալիս գեղեցկություն
Եվ զարդարում թե՛ բակ, թե՛ տուն:

157. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր 2 վանկ ունեցող բառերը և դրանք կարդա՛ վանկերով:

Ծառը բարիք է մշտապես
Միրգ է տալիս թե՛ ինձ, թե՛ քեզ:
Նա դառնում է տախտակ, գերան,
Որ դուռ շինես ու պահարան:

158. Նախադասությունները արտագրիր համապատասխան նկարների տակ:

Երեխաները ծառ են տնկում:

Մեղուները ծաղկափոշի են հավաքում:

Ծառերը քամուց օրորվում են:

Երեխաները խնձոր են հավաքում:



159. Տրված բառերից ընտրիր և գրիր հակառակ իմաստ արտահայտող բառերը:

ավարտել, բարձր, ներքև, խնդրել, ամենաարագ, իջնել, մռայլվել

ցածր _____

հրամայել _____

ամենադանդաղ _____

պայծառանալ _____

բարձրանալ _____

սկսել _____

վերև _____

160. Առարկա և գործողություն ցույց տվող բառերով կազմի՛ր նախադասություններ և գրիր:

Առարկա	Գործողություն
ամպ	գոռալ
հայրիկ	աշխատել
անձրև	մաղել
կռունկ	թռչել
եղանակ	ցրտել
մայրիկ	ծիծաղել

Ամպը գոռում է:

161. Փոխարինիր **հող** բառի առաջին տառը **գ, դ, թ, լ, կ, ձ, շ, տ, ց, փ, ք** տառերով և գրիր: Կարդա՛ ստացված բառերը:

գող,

162. Փոխարինիր **հող** բառի վերջին տառը **դ, լ, կ, ծ, ն, պ, վ, տ, ր ձ, շ, տ, ր** տառերով և գրիր: Կարդա՛ ստացված բառերը:

հոդ,

163. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծիր ամպիկների անունները:

Երկնքում ապրում էին երկու ամպիկ: Մեկի անունը Չարաճճի էր, իսկ մյուսինը՝ Ուրախիկ: Նրանք սլանում էին բարձր ու չէին խանգարում, որ արևը շողա, թռչունները երգեն, երեխաները խաղան:



– Չարաճճի՛, ասաց Ուրախիկը,– Չիջնե՞նք ներքև ու բոլորին մի լավ թրջենք:

– Ճիշտ է, թե չէ պարապ–սարապ թռչելը ձանձրալի է:

Նրանք իջան և գետինը թրջեցին: Բայց մարդիկ դժգոհ էին:

– Ի՜նչ վատ եղանակ է,– ասում էին նրանք,– ա՛յ քեզ անհաջող օր:

բ) Արտագրիր ամպիկների երկխոսությունը:

164. Կարդա՛ պատմության շարունակությունը: Ընդգծիր ***և*** տառը ունեցող բառերը:

Չարաճճին և Ուրախիկը թռան, և անձրևը կտրվեց: Բոլորը շատ գոհ էին: Ամեն օր շողում էր արևը, և շոգն ուժեղանում էր: Երկար ժամանակ անձրև չէր գալիս: Խոտերը դեղնել ու չորացել էին, ծաղիկները՝ թոշնել:

165. Որոշիր և գրիր ընդհանրացնող բառը:

աշուն, գարուն	եղանակ
սեպտեմբեր, հոկտեմբեր	
սալոր, խնձոր	
կռունկ, արագիլ	
ընձուղտ, արջ	
լոլիկ, սմբուկ	
սեղան, բազմոց	

166. ա) Կարդա՛ տեքստը: Ընդգծիր նախադասությունների առաջին բառերը:

Թեև տոնական օրն անցել էր, սակայն մեր գյուղում դեռ հյուրեր էին շրջում: Գյուղի տարեց մարդիկ նրանց օգնեցին գտնելու ճանապարհները:

Կեսօրին անձրև տեղաց: Հայտնվեց գույնզգույն ծիածանը: Բոլորը ուրախ էին:

բ) Որոշիր նախադասությունների քանակը և գրիր թիվը:

167. Կարդա՛ տեքստը: Արտագրիր մինչև **հայրիկ** բառը:

Ձմեռ էր: Արամը ձնագնդի խաղաց, սահնակով սղղաց, կարմրած տուն եկավ և ասաց հորը.

– Հայրիկ, ինչ լավ եղանակ է ձմեռը: Ես կուզենայի, որ միշտ ձմեռ լիներ:

168. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր վերջին նախադասությունը:

Երեխաները այգում գտել էին մի թռչնաբույն: Բնում կային ճուտիկներ: Երեխաները դրանք տարան տուն:

Հայրն ասաց.

– Լավ բան չէ թռչնի բույնը քանդելը: Բոլոր թռչունները մեր բարեկամներ են: Նրանք ոչնչացնում են բազմաթիվ վնասատու միջատներ:

Երեխաներն իրենց արարքից ամաչեցին: Նրանք ճուտիկներին նորից դրեցին բնի մեջ:



_____

_____

169. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծված բառերը կարդա՛ 2 անգամ:

Ո՞րն է կարևորը

Երեխաները վիճում էին կետադրական նշանների շուրջ:

– Վերջակետը դրվում է նախադասության վերջում: Կարևորը վերջակետն է,– ասաց Արան:

– Չէ՛, կարևորը ստորակետն է,– հակաճառում է Ռուբենը:

– Միջակետն ու բութը ավելի կարևոր են,– միջամտում է Լիլիթը:

– Ո՛չ, ամենից կարևորը շեշտը, հարցական ու բացականչական նշաններն են: Առանց այդ նշանների հնարավոր չէ արտահայտիչ կարդալ, – առարկում է Գուրգենը:

Մարիամը, որ հեռվից լսում էր երեխաների վեճը, ասաց.

– Կետադրական բոլոր նշաններն էլ կարևոր են: Առանց դրանք ճանաչելու մենք չենք կարող ո՛չ լավ կարդալ, ո՛չ էլ ճիշտ գրել:

բ) Արտագրի՛ր Մարիամի խոսքերը:

_____

_____

170. Կետադրական նշանները արտագրիր ճիշտ տեղում:

՝ ՞ ՛ ։ , .

վերջակետ _____

բութ _____

ստորակետ _____

հարցական նշան _____

միջակետ _____

բացականչական նշան _____

Հավելված 1

տ ը պ կ դ ռ ի շ զ ղ օ

Հավելված 2

2 3 4 5 6 7

Հավելված 3



Միքայելյան Ա.Վ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.

ՄԱՅՐԵՆԻ 2
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի սովորողների համար

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ. Մալյան 43